ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

15 մայիսի 2019 թ.
№ 7 (1041)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 54-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՒԱԹԵՐԹ

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՅԻՍԸ



Լրացավ Հայրենական պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 74-րդ տարին:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի գլխավորությամբ Մայիսի 9-ին ծաղկեպսակ դրեցին Մանկավարժական համալսարանի բակում տեղադրված Արցախյան հերոսամարտում զոհված համալսարանականների հուշաքարին, ապա միացան դեպի Հաղթանակի զբոսայգի ձգվող մարդկային երթին՝ հարգանքի տուրք մատուցելու զոհվածների հիշատակին:

Մայիսը հայ ժողովրդի համար հաղթանակների ամիսն է, եռատոն, որն ամփոփում է Շուշիի ազատագրումը, Մեծ հայրենականի հաղթանակը և Արցախի պաշտպանական բանակի ծնունդը: Հաղթանակները ձեռք բերվեցին թանկ գնով, և հայ ժողովուրդը երախտապարտ է իր պապերին ու քաջորդիներին, որոնք մոտեցրին այսօրը: Ու թեև այսօր թշնամին պարբերաբար խանգարում է մեր հայրենիքի սահմանների անդորրը, սահմանին կանգնած հայ զինվորը զգոն է ու աչալուրջ, պատրաստ կրկնելու ավագ սերունդների սխրանքները:

Մանկավարժական համալսարանի ուսանողները պարբերաբար կազմակերպում են հանդիպումներ մերօրյա հերոսների հետ, գոտեպնդում նրանց ու իրենք էլ ոգևորվում նրանց խիզախ օրինակներից: Նոր սերունդը ամուր կամքի ու ոգու կրողն է, հայրենիքի փառավոր անցյալի, ներկայի և ապագայի բախտի հանդեպ սիրո և պատրաստակամության բազում օրինակներով ու անմնացորդ նվիրումով:

ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Չինաստանի Հարավ-արևմտյան համալսարանի պատվիրակությունը երկօրյա այցով Մանկավարժական համալսարանում էր: Ռուսախոս երկրների ինստիտուտի տնօրեն, ռուսաց լեզվի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Սե Չժուն, Օտար լեզուների ինստիտուտի պրոֆեսոր Լի Սյատաոն և մագիստրոս Չժան Չենդունը հանդիպումներ ունեցան բուհի պրոռեկտորների հետ, եղան Կուլտուրայի, Պատմության և իրավագիտության, Հատուկ և ներառական կրթության, Գեղարվեստական կրթության ֆակուլտետներում, դեկանների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ քննարկեցին համագործակցության զարգացման հնարավորությունները:

Հյուրերն այցելեցին նաև «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտ, Պրակտիկայի կենտրոն և «Հայաստանը 1920-1991 թթ.» գիտական լաբորատորիա և ծանոթացան կառույցների գործունեությանը: Լրատվության և հանրության հետ կապերի վարչության աշխատակազմի հետ հանդիպման ընթացքում երկուստեք ծանոթացան բուհերի PR տեխնոլոգիաներին, իսկ ավարտին պրոֆեսոր Սե Չժուն հյուրընկալվեց Ռադիո Ֆամայի «Հարցազրույց կարևորի մասին» հաղորդմանը:

Այցն ավարտվեց համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի հետ չին պատվիրակների հանդիպմամբ:

«Մենք կարևորում ենք կրթության ոլորտում հայ-չինական հարաբերությունների զարգացումը»,- ասաց ռեկտորը և հավելեց, որ մի շարք մասնագիտությունների գծով բուհն ունի մենաշնորհ և այդ տեսանկյունից կարող է որոշակի հետաքրքրություն ներկայացնել:

➤5

ԹՈՒՄԱՆՅԱՆ. ԱՆՀՈՒՆԻ ՃԱՄՓՈՎ

Գիպաժողովի մեկնարկը

Օր առաջին

Մանկավարժական համալսարանը և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան համատեղ կազմակերպել էին «Թումանյան. Անհունի ճամփով» խորագրով միջազգային եռօրյա գիտաժողով:

Մայիսի 3-ին ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում Թումանյանի գրական գործունեությանը և նրա առանձին գործերի հիման վրա գրված երաժշտական ստեղծագործություններին անդրադարձան երկու բուհերի դասախոսներ, գրողներ և հրավիրյալներ:

Հանդիսությունը բացեց Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Արժևորելով մեծ բանաստեղծի ստեղծագործությունները մեծ բանաստեղծի ստեղծագործություններով տարբեր ժամանակներում գրված երաժշտական ստեղծագործությունները՝ ռեկտորը կանգ առավ հատկապես օպերային բացառիկ նմուշների վրա: Բուհի ղեկավարը հույս հայտնեց, որ Կոնսերվատորիայի այսօրվա ուսանողները կշարունակեն անցյալի ավանդույթները, և իրենք էլ նոր երաժշտական ստեղծագործություններով կանդրադառնան Հովհաննես Թումանյանի բանաստեղծական արվեստի եզակի էջերին:

«Թումանյանը մեկն է, Թումանյանը մեծ է, Թումանյանը մեր բոլորի մեջ է»,-ամփոփեց Ռ. Միրզախանյանը:

Ելույթ ունեցավ ՀՀ ԱԺ պատգամավոր, Երևանում Հովհաննես Թումանյանի թանգարանը երկար տարիներ ղեկավարած Նարինե Թուխիկյանը: Նա շնորհակալություն հայտնեց նախաձեռնության հեղինակներին և տեղեկացրեց, որ պատրաստվում է Հովհ. Թումանյանի ստեղծագործություններով գրված ռոմանսների խտասալիկը:

Բանախոսն ընդգծեց, որ Թումանյանի գործունեության բոլոր ոլորտներն էլ հավասարապես կարևոր են և Թումանյանի գրականության մեջ պետք է գտնել նրա գործունեության ամբողջականությունը:

«Ինձ համար Թումանյանի առաքելությունը մարդկանց մարդկայնացման տանելու ճանապարհն էր, իսկ Թումանյանի ամենամեծ ուժն իր ազատության մեջ է,- ասաց Ն. Թուխիկյանը: - Մենք պետք է գնանք նրա հետևից դեպի Անհունը, դեպի Բարձրը: Մենք պետք է այնպես անենք, որ մեր սլացքը միշտ դեպի վեր լինի, որ բոլորս ճախրենք Թումանյանի պես, բայց և միշտ ամուր կանգնելով մեր հողի վրա»:

➤2

ԱՆՀՈՒՆԻ ՃԱՄՓՈՎ

➢1 Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը խոսեց մի ժամանակաշրջանի մասին, «երբ պատմական, գեղարվեստական և քաղաքական խցանումներ կային: Եկավ Հովհ. Թումանյանը, որի հայտնությունը մեծ երևույթ էր: Նա գրականության պատմությունը մոտեցրեց մեր ժամանակներին: Թումանյանը գրապատմության մեջ եզակի է՝ իր հավաքական կերպարով: Նա լայնացրեց լեզվի մեր ընկալումը, որը շարունակեց Վ. Տերյանը»:

Է. Միլիտոնյանը խոսեց նաև Թումանյանի՝ ժողովրդից վերցրածը ժողովրդին վերադարձնելու, խոսակցական լեզուն պոեզիա բերելու, նաև թումանյանական մանկագրության և թարգմանչական աշխատանքի մասին՝ կարևորելով դրանք մանուկների դաստիարակության գործում:

«Մենք պիտի ճանաչենք Թումանյանի բացած հունը՝ մեր ինքնության ձևավորման համար, շնորհակալ լինենք Թումանյանին և ճանաչելով նրան՝ նրանով ճանաչենք նաև մեզ»,- ամփոփեց բանախոսը:

Ելույթներին հաջորդեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի զեկուցումը, ով ձևակերպեց՝ Հովհ. Թումանյանի ողջ ստեղծագործությունը երկխոսություն էր ոչ միայն սեփական ժողովրդի, այլև համայն աշխարհի հետ:

«Թումանյանն իր ապրած ժամանակաշրջանի ողբերգական հանգրվաններով ապրող ժողովրդի հետ էր, Թումանյանն իր ժողովրդի հետ է նաև այսօր: Արևելքի իմաստուն ծերունիների նման նա կանգնած է ողջ հասակով»,-շարունակեց պրոֆեսորը՝ գեղարվեստական մեջբերումներով խտացնելով ասելիքը. «Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած… Սա հայի փրկության հարցադրումն էր, ժողովրդին առաջնորդելու առաքելությունը…Եվ մենք դեռ պիտի սովորենք մեծ բանաստեղծի բարձրությունից նայել Աստծո ստեղծած աշխարհին: Թումանյանի ողջ ստեղծագործությունը երկխոսություն է ժամանակի, մարդու և Աստծո հետ, ուր ինքը բանաստեղծն է ու իր տիեզերական հոգին.

Հազար տարով, հազար դարով
առաջ թե ետ, ի՜նչ կա որ,
Ես եղել եմ, կա՜մ, կըլինեմ հար
ու հավետ, ի՜նչ կա որ,
Հազար էսպէս ձևեր փոխեմ, ձևը
խաղ է անցավոր,
Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ
հոգու հետ, ի՜նչ կա որ:

«Հազար տարվա, հազար դարի մեկնարկը տրվել է 150 տարի առաջ…»,- ամփոփեց պրոֆեսորը:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը փոխանցեց բուհի ռեկտորի պաշտոնակատար Սոնա Հովհաննիսյանի ողջույնի խոսքը, ապա իր «Թումանյանը երաժշտության մեջ» զեկուցմամբ ընդգծեց, որ Թումանյանի ստեղծագործության հմայքն այնքան մեծ է, որ ոգեշնչել է ամենատարբեր ժանրերի ու ճաշակների արվեստագետների, նա այն բացառիկ հեղինակներից է, որի բնագրերի հիման վրա ամենից շատ երաժշտական ստեղծագործություններն են գրվել: 2012-ին լույս տեսած «Թումանյանը երաժշտության մեջ» տեղեկատուն ներառում 128 հեղինակների 139 անուն երաժշտական ստեղծագործություն: Անունների թվարկումն արդեն խոսուն փաստ է՝ Ալան Հովհաննես, Սիրվարդ Գարամանուկ, Ալեքսանդր Սպենդիարյան, Տիգրան Մանսուրյան և այլք: Նա մասնավորաբար խոսեց Կոմիտասի և Ա. Տիգրանյանի օպերաների մասին և փաստեց, որ Թումանյանի և երաժշտական աշխարհի հարաբերությունը բավական լայն ուսումնասիրության դաշտ է բերում:

Այնուհետև խոսքը տրվեց Կոնսերվատորիայի վոկալ-դասական ֆակուլտետի դեկան, դոցենտ Ռուբեն Ասատրյանին: Նա իր «Թումանյանը երաժշտական բեմում. մեկնաբանության խնդիրներ» զեկուցման մեջ հիմնականում անդրադարձավ Արմեն Տիգրանյանի «Անուշ», Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերաներին, Էդվարդ Միրզոյանի «Լոռեցի Սաքո» սիմֆոնիկ ստեղծագործությանը, ինչպես նաև ուշագրավ դիտարկումներ կատարեց նշված երկու օպերաների որակական հատկանիշների մասին, ազգայինի և համամարդկայինի չափումներում փորձելով տեսնել նշված այս երկերի երաժշտական արժեքը: Նա առանձնացրեց Էդվարդ Միրզոյանի երկի ստեղծագործական պատմությունն ու ընկալման առանձնահատկությունները:

Օրվա բացահայտումն էլ հեռավոր Յակուտիայում ապրած Հրանտ Գրիգորյանի անվան վկայակոչումն էր, որը համարվում է Յակուտիայի դասական երաժշտության հիմնադիրը, և որի 100-ամյակն է լրանում այս տարվա մայիսին: Անհավանական է, որ նրա ստեղծագործությունների ցանկում Թումանյանի «Տոնակատարություն լեռներում» օպերան է, որի ճշգրտման ճանապարհով գնալու է դիրիժորը՝ բացահայտելու համար թումանյանական ակունքները. թերևս մի քանի լիբրետտոյի համադրումով է ստեղծված:

Թումանյանի պոեզիայի հատընտիր էջերից ներկայացրին ՀՊՄՀ աշխատակցուհի Գարունա Երանոսյանը և բուհի շրջանավարտ Նարեկ Մարգարյանը, ապա միջոցառումը եզրափակվեց ԵՊԿ դասախոս, ռեժիսոր Արսեն Ղազարյանի՝ «Անուշ» օպերայի բեմադրության առթիվ կոմիտասյան պատառիկների ընթերցումով: ԵՊԿ օպերային ստուդիայի սաներ Արման Առաքելյանը, Մերի Մարտիրոսյանը և Ռուբեն Ոսկանյանը ներկայացրին մի հատված «Անուշ» օպերայից:

Ներկաները հեռացան՝ իրենց հետ տանելով Լոռվա չքնաղ բնաշխարհի ծնունդ, իր ժողովրդի ողբերգության ու հույսի ճանապարհի ուղեկից Մեծն Թումանյանի հոգևոր մաքառումների ու գրական փիլիսոփայության մարդասիրական ընկալումների զորացնող զգացողությունները:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ

Օր երկրորդ

Մայիսի 3-ից մեկնարկած ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 150-ամյակին նվիրված եռօրյա գիտաժողովը երկրորդ օրը շարունակվեց բանաստեղծի ծննդավայր Դսեղ գյուղում:

ՀՊՄՀ Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության ամբիոնի նախաձեռնությամբ գումարված գիտաժողովի երկրորդ նիստն այստեղ բացեց նրա վարիչը՝ «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը: Այն համալսարանի Բանասիրական ֆակուլտետի ուսանողական գիտական նստաշրջանի շրջանակում էր: Իր խոսքն ուղղելով ուսանողներին՝ պրոֆեսորն ընդգծեց, որ հենց նրանց է բացառիկ բախտ վիճակվել բանաստեղծի ծննդից 150 տարի անց արժևորել և մեծարել Թումանյանին հենց նրա ծննդավայրում, բնաշխարհի չափումներով մոտենալ խոշորագույն քնարերգակի ստեղծագործական շերտերին. «Այս գիտաժողովը կամբողջացնի Թումանյանի բանաստեղծական մեծ աշխարհի ձևավորման հիմքերը, կհարստացնի մարդու ներաշխարհի և գյուղաշխարհի շաղախը, որովհետև իրական Թումանյանը ա՛յս խորքերում է, որին դեռ շատ սերունդներ պետք է կարդան և յուրովի բացահայտեն»,- հավելեց պրոֆեսորը:

Գիտաժողովի մասնակիցներին ջերմությամբ ողջունեց Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի տնօրեն Ռոզա Ղազումյանը, որը մասնակիցներին բացառիկ հնարավորություն էր տվել գիտաժողովի նիստն անցկացնել Թումանյանի ամառանոցային սենյակում, որտեղ բանաստեղծը սովոր էր ընդունել իր հյուրերին: Ռ. Ղազումյանը հպարտորեն շեշտեց, որ թանգարաններ շատ կան Հայաստանում, բայց այս մեկում Թումանյանի շունչը գերիվեր է ու համակող:

Գիտական նստաշրջանն սկսվեց «Հովհ. Թումանյանը՝ թարգմանիչ» թեմայով: Մագիստրոս Վանուհի Գեորգյանը, ներկայացնելով բանաստեղծի թարգմանական գործունեությունը՝ շեշտադրեց այն փաստը, որ Թումանյանը պարզապես թարգմանիչ չէր, այլ այն եզակիներից, որը, օգտվելով ժողովրդական բանարվեստի գանձարանից, համաշխարհային գրական ստեղծագործությունների ենթահողը դարձնում էր հայաշունչ, իրեն հեռու չպահելով օտարների հետ մրցակցության արդարամիտ գայթակղությունից:

Մագիստրոս Լիլիթ Պապյանն անդրադարձավ Հովհ. Թումանյանի խոհափիլիսոփայական՝ «Դեպի անհունը» պոեմի ստեղծագործական պատմությանը, գաղափարական ծավալումներին՝ նյութ ունենալով պոեմն իբրև նոր ընթերցման փորձ, իբրև կյանքի և մահվան առեղծվածի թումանյանական ընկալում, վերհանելով պոեմի տարբերակների համադրական զուգահեռները:

Մագիստրոս Աստղիկ Բոյաջյանի «Հովհ. Թումանյանի հայացքը նախորդ շրջանի գրական զարգացումների շուրջ» զեկուցումն անդրադարձ էր հրապարակախոսի և գրական տեսաբանի ընմբռնումներին, ուր կենտրոնական հարցադրումներ էին գրական «անհաշտ մտերմություն» կազմած Նալբանդյան-Պատկանյան-Դուրյան մեկնական ուրվագծումները:

«Հայրենասիրական քերթվածներում Հովհ. Թումանյանի քաղաքացիական կերպարը» նյութի շուրջ խոսեց առկա բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանող Լիլիթ Դանիելյանը, որը թափանցեց բանաստեղծ քաղաքացու ազգային-ընկերային հասարակական գործունեության խորքերը:

Իսկ ահա Աննա Դավթյանը (բակալավրիատ, 3-րդ կուրս) հանդես եկավ «Գրիմմ եղբայրներ և Հովհ. Թումանյան» նյութի շուրջ՝ մանրամասն ներկայացնելով թարգմանիչ հեքիաթագրի կատարած ստեղծագործական բարձր աշխատանքը Գրիմմների բարդ աշխարհը թափանցելիս: Նա ցույց տվեց ուշագրավ զուգահեռներ, որոնցով մեր գրողը մոտեցել է հայկական ժողովրդական ակունքներին, ինչի շնորհիվ այդ հեքիաթները առ այսօր ընկալվում են մանուկների ու մեծերի համար որպես թումանյանական գործեր:

2-րդ կուրսի ուսանող Կարլեն Նազարյանը խոսեց «Սիմվոլների խաղարկումը Հովհ. Թումանյանի և Լևոն Շանթի ստեղծագործություններում» նյութի շուրջ՝ քննելով երկու մեծությունների՝ գրական կայուն սիմվոլների զուգահեռ խորհուրդների կիրարկման եղանակները ստեղծագործական՝ իրարից տարբեր աշխարհներում:

Նույն կուրսից Անի Քերոբյանը հանդես եկավ «Երգիծանքը Հովհ. Թումանյանի պատմվածքներում» զեկուցմամբ, որտեղ փորձեց վերհանել արձակագիր Թումանյանի երգիծանքի առանձնահատկությունները՝ դիտելով ժողովրդի հոգսերի բեռը, որը մատուցում է «արցունքի միջից բխած ծիծաղի խաղով» և հուշում, որ թումանյանական պատմվածքների հերոսները նահապետական մարդիկ են, որոնց հեղինակը եթե հեգնում էլ է, ապա՝ գութն ու կարեկցանքը շեշտադրած:

Ամփոփելով գիտաժողովի երկրորդ օրը՝ պրոֆեսոր Ս. Դանիելյանը շնորհակալություն հայտնեց ուսանողներին իրենց հետաքրքիր զեկու- ➢3

ԱՆՀՈՒՆԻ ՃԱՄՓՈՎ

➤2 ցումների համար և գրականության գծով հայցորդ Անանա Սարգսյանի հետ դիմեց աշխույժ քննարկման փուլին:

ԹԲԻԼԻՍԻ. ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Օր երրորդ

ՀՊՄՀ գիտնական-մանկավարժների, ուսանողների, լրագրողների և Երևանի պետական կոնսերվատորիայի արվեստագետ դասախոսների պատվիրակությունը մայիսի 4-ին հասավ Թբիլիսի: Նույն օրը նրանք այցելեցին վիրահայության թեմի առաջնորդի նստավայր Մեյդանի Ս. Գեորգ եկեղեցին, որը կառուցվել է 1251-ին: Հայաստանից եկած հյուրերին հոգևոր և պատմամշակութային հանգամանալից բացատրություններ տվեց եկեղեցու սպասավոր Տեր Կիրակոս քահանան, որից հետո Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը հայրենիքից եկած մեծ խմբի հետ շահեկան զրույց ունեցավ հոգևոր, կրթական, գրական-երաժշտական խնդիրների մասին՝ առանցքում պահելով վիրահայ համայնքի մերօրյա հիմնախնդիրները և, իհա՛րկե, Հովի. Թումանյանի հոբելյանի հետ կապված հանձնառությունները:

Հաջորդ առավոտ Հովի. Թումանյանի 150-ամյակին նվիրված եռօրյա գիտաժողովն իր աշխատանքները շարունակեց և ամփոփեց հայերի համար պատմական այս քաղաքի «Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում, ուր նրանց ընդունեցին առաջնորդ Վազգեն Սրբազանը և կենտրոնի ղեկավար Գիսանե Յովսեփյանը, վիրահայ մտավորականության ընտրանին կազմող բազմաթիվ հյուրեր, գրողներ, ուսուցիչներ, լրագրողներ:

Բացման խոսքում պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը նախ շնորհակալություն հայտնեց Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանին այս նախաձեռնությունը կյանքի կոչելու համար, ապա ջերմ ընդունելության և աջակցության համար՝ տանտերերին: Ս. Դանիելյանը նկատեց, որ այս հանդիպումով Թումանյանն այսօր ևս իր ներկայությամբ միավորում է Հայաստանում և Վրաստանում ապրող ու ստեղծագործող մտավորականներին: Ապա Հայ նոր և նորագույն գրականության ամբիոնի և «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի անունից խորհրդանշական՝ Սարոյի ու Անուշի դիմանկարը պատկերող նվեր հանձնեց Թումանյանի տանը:

Օրհնության խոսքում Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը իրավացիորեն նկատեց, որ Թումանյանի մեծությունն այնքան անչափելի է: Թումանյանը նախ և առաջ մեզ սովորեցնում է, թե ինչպիսին պետք է լինի հայ մարդը, հայ քաղաքացին, հայ գրողը իր ժողովրդի համար: «Հովի. Թումանյանը կարծես խաչվեց Քրիստոսի պես, բայց երբեք չխուսափեց այդ դառը փորձությունից, այլ մյուս ասամենայն հայոց բանաստեղծին նվիրված էջերը՝ բացահայտելով նյութը լեզվաոճական պատկերների և բառամթերքի կիրառության խորքով:

ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության ամբիոնի դոցենտ Լուսինե Գալստյանը «Հովի. Թումանյանի «Հին կռիվը» պոեմը» զեկուցման մեջ երևան բերեց պոեմի ստեղծման դրդապատճառները, պոեմի ձեռագրերի կորստի ցավալի փաստը: Նա արձանագրեց, որ տվածաշնչյան կերպարների պես շարունակեց մնալ իր ժողովրդի հետ»: Նա հպարտությամբ հավելեց նաև, որ «Թումանյանի տուն» կենտրոնը շարունակում է կամուրջ մնալ հայ և վրացի արվեստագետների միջև, և դրա վկայությունն են վերջերս վրացերենի թարգմանված Թումանյանի տասը հեքիաթների, ինչպես նաև շուտով ընթերցողների սեղանին դրվելիք «Հովի. Թումանյանը Վրաստանի մասին և վրացիները Թումանյանի մասին» գրքերը:

Բանաստեղծ, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնխչյանը՝ «Թումանյանական նոր «Վերնատան» ստեղծումը» թեմայով իր զեկուցման մեջ ներկայացրեց կառույցի ստեղծման հետաքրքիր և դժվարին պատմությունը, նրա կատարած հսկայածավալ աշխատանքը: Նա հպարտությամբ նշեց, որ «Վերնատուն»-ը փորձում է մեր օրերում շարունակական պահել թումանյանական ավանդույթը. այս տարիների ընթացքում հրատարակել է շուրջ 11 տարեգիրք, բացվել է «Գրական ծիլեր» մանկապատանեկան ակումբը, որի նպատակն է թևավորել շնորհալի ստեղծագործողներին՝ ապահովելով վիրահայ սերունդների հաջորդականությունը:

«Հովհաննես Թումանյանը Պարույր Սևակի գնահատմամբ» զեկուցման մեջ ՀՊՄՀ Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Մարտին Գիլավյանը բացեց Թումանյան-Սևակ առնչությունները՝ սկսած բանաստեղծությունների կառուցման եղանակներից, բառապատկերային անմիջական ազդեցություններից մինչև գրական-տեսական ընկալումների զուգահեռները:

ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի դեկան, դոցենտ Աշոտ Գալստյանը հանդես եկավ «Հովհաննես Թումանյանը ժամանակակիցների հուշերում. կառուցվածք և լեզու» հետաքրքրական զեկուցումով, որտեղ մանրամասնորեն ներկայացվեցին արևելահայ հուշագրության մեջ արևմտահայության ջարդերի արձագանքները չէին կարող չցնցել ամենայն հայոց բանաստեղծին, և պոեմն ամբողջությամբ այդ տրամադրությունների պատկերումն է: Թումանյանը ստեղծել է մի պոեմ, որի գլխավոր հերոսը իր անձի էպիկական պրոյեկտումն է, քանի որ ինքն էլ հերոսի պես տարված էր Արևմտահայաստան մեկնելու ցանկությամբ:

«Թումանյանի գրաքննադատության» շուրջ» թեմայով զեկուցման մեջ նույն ամբիոնի դոցենտ Նաիրա Խաչատրյանն ընդգծեց, որ Թումանյանի հրապարակախոսական երկերը շոշափում են մի շարք խնդիրներ, որոնք հուզել են բանաստեղծին՝ դպրոց, մամուլ, հայ ժողովրդի պատմական ճակատագիր, քաղաքական և մշակութային հարցեր: Իր հրապարակախոսական էջերում Թումանյանը գեղարվեստական պատկերավորման հարուստ միջոցներով ոչ միայն ներկայացնում է հասարակական-քաղաքական կյանքի որոշակի խնդիրներ, այլև առաջ է քաշում գրական-փիլիսոփայական հարցադրումներ:

«Թումանյանը և Վրաստանը» նյութի շուրջ խոսեց «Հայկական գիտահետազոտական ասոցիացիա Վրաստանում» ՀԿ նախագահ, բ.գ.թ., պրոֆեսոր Էմմա Ախտյանը: Նա անդրադարձավ Թումանյանի՝ թբիլիսյան տարիների գործունեությանը՝ նշելով, որ թեև դրանք ծանր տարիներ էին մեծ լոռեցու համար, այնուհանդերձ նա խորը սիրով և ջերմությամբ էր կապված Վրաստանին և վրաց ժողովրդին. նա յուրատեսակ կամուրջ էր երկու ժողովուրդների միջև: Պատահական չէ, որ իր ամենասիրված հերոսներից շատերը թբիլիսյան կոլորիտն են ներկայացնում: Թումանյանը նաև մտահղացել է կազմել երկու ժողովուրդների դարավոր կապին և եղբայրությանը նվիրված ժողովածու:

«Թումանյանի տուն» կենտրոնի ղեկավար Գիսանե Հովսեփյանը ներկայացրեց Հովի. Թումանյանի թբիլիսյան տան պատմությունը: Նա նշեց, որ Թումանյանների ընտանիքը այդ տանը բնակվել է 1909-ից, սակայն կարճ ժամանակում այն դարձել է գրական, հասարակական, քաղաքական օջախ ոչ միայն հայերի համար, այլև Անդրկովկասի ողջ մտավորականության կենտրոնատեղի: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Թբիլիսիի քաղաքային իշխանությունն այդ տունը նվիրել է Թումանյաններին. սա անշուշտ խոսում է այն պատկառանքի մասին, որ ունեցել են Վրաստանում ամենայն հայոց բանաստեղծի նկատմամբ: 1930-ական թթ., սակայն, Թումանյանի ժառանգները ծանր փորձությունների առջև են կանգնել. սկզբից կիսվել է տունը, ապա ավելի ուշ՝ 1990-ականներին դրա մի մասը վերածվել է քաղաքային գրադարանի: 1953 թ. Թումանյանի կնոջ՝ Օլգա Մաճկալյանի նախաձեռնությամբ Երևանում բացվել է Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը, և Թբիլիսիի բնակարանից ողջ գույքը և գրադարանը փոխադրվել են Երևան: Վերջին տարիներին թբիլիսյան բնակարանի գոյությունը նորից վտանգված էր, սակայն Վիրահայոց առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի, ինչպես նաև Հայաստանի գրողների միության երջանկահիշատակ նախագահ Լևոն Անանյանի և թբիլիսահայության ջանքերով գտնվում են մեկենասներ, և տունը կրկին լցվում է թումանյանական շնչով:

«Հովի. Թումանյանը՝ հայվրացական բարեկամության ոսկե օղակ» զեկուցմամբ հանդես եկավ Վրաստանի մշակույթի, կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակից Կարինե Մանուկյանը: Վրաստանը, հիրավի, դարձել է բանաստեղծի երկրորդ հայրենիքը, որին նա շարունակաբար սիրո և ջերմության խոսքեր է հղել: Դրա վկայություններն են «Հիշողություն», «Վրաստանի մասին», «Վրաստանի պոետներին», «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» և այլ գործեր: Իսկ վրացի քնարերգու Տ. Տաբիձեն Թումանյանին է ձոնել «Պոետների երազանքը» բանաստեղծությունը:

Զեկուցումների բաժինը եզրափակեց Հայ նոր և նորագույն գրականության ամբիոնի դոցենտ Քնարիկ Աբրահամյանը՝ «Գրական հարցադրումները Թումանյանի նամակներում. մի քանի նկատառում» նյութով, որտեղ առանձին ենթակետերով շեշտադրեց այն ստեղծագործական փոխանցումները, տեսաբանական եզրահանգումները, որոնք երևան են գալիս հեղինակի նամակագրության մեջ և առանձին քննության չեն ենթարկվել:

Անակնկալները, սակայն, առջևում էին: Գիսանե Հովսեփյանը իր տպավորիչ խոսքում նկատեց, որ այս այցելությամբ և գիտաժողովով ամբողջացավ Թումանյանի տան գիտամշակութային անվան գիտական բաղադրիչը, ինչի համար իրենց շնորհակալությունը սրտաբուխ է:

Այցի ավարտին Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Սրբազանը «Հովհաննես Թումանյան» մեդալով պարգևատրեց իր ուսուցչին՝ Սուրեն Դանիելյանին: Վերջինս, չկարողանալով թաքցնել հուզմունքը, նշեց, որ պարգևատրվել է հայ ամենից մեծանուն բանաստեղծի անվան մեդալով, որը մեծագույն պատիվ է և առ այսօր իր ստացած ամենաթանկ պարգևը:

Գիտաժողովի ավարտից հետո մասնակիցներն այցելեցին Խոջիվանքի պանթեոն և Մանկավարժական համալսարանի անունից ծաղկեպսակ դրեցին Ամենայն հայոց բանաստեղծի շիրմին:

«Շախմատը յուրահատուկ ոլորտ է, ուր պայքարն ազնիվ է»

Ծաղկաձորում անցկացվեց «Շախմատային կրթության արդի վիճակը և զարգացման միտումները» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողով Շախմատի միջազգային ֆեդերացիայի (ՖԻԴԵ), ՀՀ ԿԳՆ-ի, Մանկավարժական համալսարանի և Հայաստանի շախմատի ակադեմիայի համատեղ նախաձեռնությամբ:

Գիտաժողովը բավականին ներկայացուցչական էր. 20-ից ավելի երկրների ներկայացուցիչներ, որոնց թվում էին ֆեդերացիաների, կրթության ոլորտի պատասխանատուներ, այլ շահագրգիռ անձինք:

Մասնակիցները մեկտեղվել էին՝ քննարկելու աշխարհի տարբեր երկրներում շախմատ առարկայի ներդրման կարևորությունը, ծանոթանալու դասավանդման մեթոդներին և այլն:

ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանն իր ողջույնի խոսքում ընդգծեց, որ ձեռնարկը Հայաստանի համար ունի կարևոր նշանակություն. «Շախմատի դասավանդման ներդրված ծրագիրը քննարկման, արդյունքների ամփոփման, խնդիրների վերհանման և նոր լուծումների առաջադրման կարիք ունի: Շախմատը կրթության մեջ կարևորված է լավագույն կրթական համակարգն ունեցող երկրներում, ուստի պետք է հետևենք զարգացումներին»:

«Առարկայի ներդրումը կլինի առավել արդյունավետ, երբ հետևենք դասավանդման մեթոդներին և ուսուցիչների վերապատրաստմանը»,-ընդգծեց նախարար Ա. Հարությունյանն ու հույս հայտնեց, որ գիտաժողովի շրջանակներում կլինեն քննարկումներ հատկապես այն խնդիրների վերաբերյալ, որոնց մասին բարձրաձայնում են ծնողները, ուսուցիչները. դրանք կարող են նոր թափ հաղորդել շախմատի դասավանդման ընթացքին: Ի դեպ, ԿԳ նախարարը օտարերկրյա հյուրերին կոչ արեց աջակցել, որ իրենց երկրների շախմատի դպրոցական թիմերը մասնակցեն առաջիկայում Հայաստանում անցկացվելիք միջազգային առաջնությանը:

«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի հիմնումը լավագույն նվերն է Մանկավարժական համալսարանի 95-ամյակի առթիվ: Ուրախալի է, որ կառույցի գիտահետազոտական գործունեությունը, մեթոդաբանական մոտեցումները միանգամից արժանացան միջազգային ուշադրության»,-ասաց Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը և վստահեցրեց՝

բուհը կանի հնարավորը, որ գիտահետազոտական ինստիտուտն արձանագրի նոր ձեռքբերումներ: Ռեկտորը հավելեց, որ կառույցի ամենօրյա աշխատանքի արդյունքում վերհանվում են ոչ միայն շախմատի դասավանդման, այլև հանրակրթության ոլորտի մի շարք խնդիրներ:

«Շախմատը յուրահատուկ ոլորտ է, ուր պայքարն ազնիվ է և բացառվում են արհեստական միջամտությունները»,-նշեց Ռուբեն Միրզախանյան: Կարևորելով շախմատի ուսուցումը՝ ռեկտորը հույս հայտնեց, որ կմշակվի շախմատի ուսուցիչների պատրաստման միջազգային ծրագիր:

«Հայաստանը շախմատի ոլորտում մեծ վարպետ է: Նման հանդիպումներն ու ձեռնարկները հնարավորություն կտան ծանոթանալ հայաստանյան լավագույն փորձին, դասավանդման տարբեր մոտեցումներին»,-նշեց ՖԻԴԵ-ի փոխնախագահ Բաշար Քուաթլին՝ տեսակապով միանալով գիտաժողովի աշխատանքներին: Նա վստահեցրեց, որ կառույցն անկախ մասնագետների վերլուծությունների կարիք ունի և գիտաժողովի մասնակիցներին կոչ արեց իրենց քննարկումներում շախմատին վերաբերվել որպես կրթական գործիքի և կրթության մեջ կարևորագույն մեթոդի:

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, ՀՊՄՀ-ի «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, Շախմատի և սպորտի ամբիոնի վարիչ Սմբատ Լպուտյանը ներկաներին շնորհակալություն հայտնեց մասնակցության համար և հույս հայտնեց, որ երկօրյա քննարկումները հնարավորություն կտան հասկանալ՝ որքանո՞վ է շախմատը կարևոր կրթական համակարգում:

«Աշխարհահռչակ շախմատիստների մասնակցությունը գիտաժողովին վկայում է այն մասին, որ նրանք ծառայում են շախմատի զարգացմանը: Այս գիտաժողովում մենք պետք է սովորենք միմյանցից այնպես, ինչպես շախմատում»,-նշեց Սմբատ Լպուտյանը և, խոսելով կրթության ոլորտի ներկայիս խնդիրների մասին, կոչ արեց դրանց ընդառաջ գնալ՝ գիտակցելով ապագայի վրա շախմատի դրական ազդեցությունը:

Միջազգային գրոսմայստերն այն կարծիքին է, որ շախմատի դասավանդման ոլորտում Հայաստանն առաջատար է, ուստի ունի լավագույն օրինակներ, խնդիրների լուծումներ ցույց տալու պարտավորություն, միաժամանակ վստահեցրեց՝ աշխարհի հասարակությունը կարևորում է շախմատը և ներկաներին կոչ արեց աջակցել իմաստուն խաղի դասավանդման բարեփոխումներին:

ՖԻԴԵ-ի պատվավոր փոխնախագահ, հունգարացի շախմատիստուհի, գրոսմայստեր Յուդիթ Պոլգարն էլ իր ելույթում խոստովանեց՝ շախմատի շնորհիվ է հասկացել, թե ով է ինքը. այն տվել է ինքնավստահություն և մեծ ազդեցություն ունեցել իր զարգացման վրա:

«Շախմատը կախարդական կրթական գործիք է: Բացի այդ, այն խաղ է բոլորի համար, հատկապես երեխաների, որոնց շատ է պետք ինքնավստահությունը»,-նշեց Յուդիթ Պոլգարն ու բարձր գնահատեց Սմբատ Լպուտյանի և շախմատի դասավանդմանն աջակցողների մեծ թիմի աշխատանքը. այն հնարավորություն է տալիս աշխարհին ասելու և հավատացնելու, որ շախմատը հնարավոր է դասավանդել:

ՖԻԴԵ-ի փոխնախագահ Նայգլ Շորթը Հայաստան այցելել է 35 տարի առաջ, երբ Երևանում մասնակցում էր մրցաշարի՝ խաղալով Սմբատ Լպուտյանի հետ. չնայած իմաստուն խաղի մրցույթում չհաղթեց, բայց երկրից տարավ անմոռանալի հիշողություններ ու նկարներ. «Այս գիտաժողովին եկել եմ իբրև ուսանող: Հայաստանի դերը մեծ է. այն առաջամարտիկ է և զարմանալի կարևոր դեր է կատարում շախմատի դասավանդման ոլորտում»,-նշեց Նայգլ Շորթն ու կոչ արեց մեկտեղել ջանքերը:

ՖԻԴԵ-ի փոխնախագահը վստահ է՝ այն, ինչ կիրառվում է Հայաստանում, նույն հաջողությամբ չի կարող կիրառվել այլ երկրներում. պետք է մշակել տարբեր մոդելներ, որում անհրաժեշտ է Հայաստանի լավագույն փորձը:

Գիտաժողովը շարունակվեց մասնակիցների զեկույցներով: Զեկուցողներն անդրադարձան շախմատի կրթական ուժին ու արժեքին, շախմատային կրթությանը Եվրոպական շախմատային միությունում, ինչպես նաև հոգեբանական տեսությունների և պրակտիկայի շրջանակներում շախմատի ուսուցման հետազոտության արդյունքներին:

Օտարերկրյա մասնակիցներն ընդգծում են՝ իրենց երկրներում կարևոր է ցույց տալ, որ շախմատը անհրաժեշտ մանկավարժական գործիք է: ՖԻԴԵ-ի «Շախմատը կրթական համակարգում» հանձնաժողովի խորհրդական Լ. Գարսիայի կարծիքով շախմատը որպես պարտադիր առարկա ներդնելուն անհրաժեշտ է հասարակության աջակցությունը և որ «փոփոխվող աշխարհին հարմարվելը ամենակարևոր կարողությունն է 21-րդ դարում, իսկ շախմատը սովորեցնում է արագ հարմարվել և որ ամենակարևորն է՝ լսել»:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՉԻՆԱԿԱՆՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

➢1 Ռ. Միրզախանյանը կարևորեց նաև «Ամառային դպրոց» ծրագրի շրջանակներում ուսանողների փոխանակման ծրագրերը, ինչը միմյանց պատմությանը, մշակույթին ու ավանդույթներին ծանոթանալու լավագույն հարթակ է:

Ռուսախոս երկրների ինստիտուտի տնօրեն, ռուսաց լեզվի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Սե Չժուն ընդգծեց, որ արդեն հասցրել են ծանոթանալ բուհի հնարավորություններին և նախանշել համագործակցության ուղիներ:

Չինացի հյուրերը մասնավորապես ընդգծեցին բուհի ջերմ հյուրընկալությունն ու համագործակցության պատրաստակամությունը: Խոսելով իրենց հետաքրքրող ոլորտների մասին՝ նրանք նշեցին, որ առավել հետաքրքրված են հայագիտության, գիտական ամսագրերում հոդվածներ տպագրելու, Մանկավարժական համալսարանից ռուսաց լեզվի դասախոսներ հրավիրելու ուղղությամբ:

Պրոֆեսոր Սե Չժուի հավաստմամբ համագործակցությանն ուղղված առաջին քայլը համաձայնագրի կնքումն է, և առաջիկայում նախատեսված է բուհի ռեկտորի այցը Մանկավարժական համալսարան:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

«ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ»

Սկզբնական կրթության ֆակուլտետի կազմակերպած հանրապետական գիտաժողովը նվիրված էր սկզբնական կրթության արդի հիմնախնդիրներին: Համանուն խորագրով գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին և արդյունավետ աշխատանք մաղթեցին ՀՊՄՀ պրոռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը և փոխդեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Պողոսյանը:

Լիագումար նիստում լսեցին չորս զեկուցում: Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Աբրեյանի զեկուցումը վերաբերում էր GeoGebra ծրագրի կիրառմանը տարրական դասարաններում՝ ստոխաստիկայի տարրերի դասավանդման ուսուցմամբ:

ԿԱՊԿՈՒ երեխաների զարգացման առանձնահատկություններին և ուսումնական գործընթացում նրանց հաշվառման մասին էր Արցախի պետական համալսարանի մագիստրոսական կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Արևիկ Ալեքսանյանի զեկուցումը:

Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրոսական կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողուհի Էմմա Կոստանյանը հանդես եկավ «Քոուչինգային գործունեությունը ուսուցչի պրակտիկ աշխատանքում», իսկ բակալավրի կրթական ծրագրով 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Պողոսյանը՝ «Սոցիալական հմտությունների դրսևորման առանձնահատկություններն Օուլուի և Երևանի նախադպրոցական հաստատություններում» զեկուցումով:

Հանրապետական գիտաժողովի աշխատանքը շարունակվեց մասնախմբերում, ուր ակտիվ քննարկումներ եղան զեկուցումների շուրջ:

Եզրափակիչ նիստում ամփոփեցին աշխատանքի արդյունքները:

Ս. ԱՍՐՅԱՆ



ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՎԱՂ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԳՐՄԱՆ ՆՈՐ ՓՈՐՁ

2019 թվականը, հիրավի, շնչում է մեծ Թումանյանով, ու շատերը հոդվածներով ու գրքերով իրենց երախտիքն են արտահայտում պաշտելի ու անմահ գրողին: Իմ աշխատասենյակ է մտնում մի տղամարդ, որի հետ ես սովորել եմ հինգ տարի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետում: Մեր կուրսում սովորում էին 25 տղաներ և 25 աղջիկներ, որոնք բուհ էին ընդունվել՝ հաղթահարելով դժվարին մրցույթ: Հիանալի մի կուրս էր՝ ուսումնատենչ տղաներ ու աղջիկներ: Բավական է հիշել, որ մեր կուրսում էին սովորում տաղանդաշատ բանաստեղծներ Ռազմիկ Դավոյանն ու Արմեն Մարտիրոսյանը: Հրաշալի դասախոսներ ունեինք՝ Աշոտ Աբրահամյան, Արարատ Ղարիբյան, Վաղարշակ Քոսյան, Վաչե Պարտիզունի, Արշալույս Բաբայան, Առաքել Առաքելյան, Սողոմոն Սողոմոնյան, Մորուս Հասրաթյան, Զավեն Գրիգորյան, Կառլեն Միրզախանյան, Արտաշես Պողոսյան: Բնականաբար 1964 թվականից հետո չեմ հանդիպել մեր կուրսեցիներից շատերին, դրանց թվում նաև Լենդրոշ Հակոբջանյանին, որն իմ այցելուն է, անմիջապես նրան հիշում եմ դեմքով: Պարզվում է՝ նա ապրում է Ստեփանավանում, ուր եղել է մանկավարժ, լրագրող, ժողկրթբաժնի մեթոդական կաբինետի վարիչ, հիմնադրել է «Գրական Լոռի» պարբերականը, գրել է 5 գրքեր:

Նա բերել էր իր նոր գիրքը՝ «Թումանյանը և Ջալալօղլին» խորագրով: Գրքի երկրորդ բաժինը պարունակում էր լուսանկարների նորահայտ օրինակներ. դրանք մարդկանց պատկերներ էին, որոնք առնչվել էին Թումանյանին:

Գիրքն ունի և՛ նախաբան, և՛ վերջաբան: Ճշգրտորեն գիտակցելով Հովհաննես Թումանյանի դերը հայ ժողովրդի կյանքում՝ հեղինակը գրում է. «Անվախճան ժամանակի հետ Թումանյանը վախճան չունի: Նա Մաշտոցի, Խորենացու, Նարեկացու հետ է»:

Հակոբջանյանի գիրքը սկսվում է Լոռու մասին պատմական ակնարկով, որի իմաստը, ինչպես Թումանյանը կասեր «պատմում է Լոռու հին-հին քաջերից»:

Ուշագրավ է այն պատմական ազդակը, որի հիման վրա Ջալալօղլում բացվել է երկսեռ դպրոց՝ 125 տղաներով և 60 աղջիկներով: Ազդակը «Մշակ» թերթում տպագրված քննադատական հոդվածն էր, որը մերկացնում էր նոր բուրժուական հարաբերությունների հարստացած քաղաքացիների անտարբերությունը դեպի դպրոցը և ուսումը:

Գրքի էջերում տարիների հերթականությամբ լուսաբանվում են Թումանյանի կյանքի այն էջերը, որոնք կապված են Ջալալօղլի քաղաքի հետ: Հատկանշական է այդ քաղաքի նորաբաց դպրոցում դասավանդվող առարկաների ցանկը՝ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, պատմություն, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն:

Հավանաբար Թումանյանն օգտվել է քաղաքում ապրող և դպրոցը հովանավորող Տիգրան Տեր-Դավթյանի գրադարանից, որում կային հայ, ռուս, եվրոպացի գրողների գրքեր ու պարբերականներ:

Ամուսնանալուց հետո՝ 1894-ին, Թումանյանն իր կնոջ՝ Օլգայի հետ այցելում է Ջալալօղլի և ապա Դսեղ: Գրքից պարզ է դառնում, որ հետագա կյանքում մեծ գրողն իր կապը չի կտրել Ջալալօղլուց. այցելում էր Դսեղ գնալիս: Ջալալօղլու և Թումանյանի կապը վերաշարադրվում է ընկերների, հարազատների, Թումանյանի հետ շփված մարդկանց հուշագրության հիման վրա:

Բանաստեղծի մանկապատանեկական կենսասիրությունն են պատկերում հուշերի մի մասը: Ներկայացվում է նրբագեղ Վերգինեին գրեթե մանկական տարիքում ուղղված առաջին չափածո բանաստեղծությունը:

Թումանյանը պաշտում էր իր ծննդավայր Լոռին, նա սիրում էր լինել նաև Լոռվա տարածաշրջանի Կուրթան գյուղում:

Գիրքն ավարտվում է գրողի գրառած բանահյուսական սրամտություններով, որոնք ժամանակին տպագրվել են «Նոր դար» պարբերականում:

Լենդրոշ Հակոբջանյանի «Թումանյանը և Ջալալօղլին» գիրքը վկայում է, թե մեծ գրողի, մարդասերի ու հանճարեղ մտածողի ոգին առ այսօր թևածում է Ստեփանավան կոչվող այն քաղաքում, որն իր դերն է ունեցել ճշմարիտ հայրենասերի կյանքում:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԸ՝ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՁԵՎԱՉԱՓՈՎ

Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնը տարին երկու անգամ հաշվետու համերգ է կազմակերպում: Արդեն ավանդական դարձած համերգային ծրագրին մասնակցում են ամբիոնի բոլոր մասնագիտությունների գծով կրթություն ստացող ուսանողները:

Առաջին համերգը կայացավ մայիսի 8-ին համալսարանի ֆակուլտետի ընդարձակ դահլիճում, իսկ մայիսի 9-ին ամբիոնը համերգային ծրագրով հանդես եկավ Կոտայքի մարզում:

Համերգին մասնակցեցին ժողգործիքների նվագախումբը՝ գեղ. ղեկավար Նորայր Դավթյան, քանոնահարների խումբը՝ ղեկ. Հասմիկ Լեյլոյան, ջազ-բենդը՝ ղեկ. Երվանդ Երզնկյան, փողային նվագախումբը՝ ղեկ. Կոլյա Մարտիրոսյան, դուդուկահարների անսամբլը՝ ղեկ. Հրաչ Նազարյան, կլարնետահարների անսամբլը՝ ղեկ. Սևադա Շհոյան, դհոլահարների համույթը՝ ղեկ. Արազ Օրդինյան:

«Սա մեր հաշվետու համերգն է, և ես շատ եմ կարևորում պրոֆեսիոնալ հանդիսատեսի առաջ ուսանողների ելույթները,-ասաց ամբիոնի վարիչ Արա Գևորգյանը:-Սա նաև յուրօրինակ փորձ է Ծաղկաձորի ավագ դասարանների աշակերտների համար Մայիսի 9-ի ելույթից առաջ: Ընդհանրապես սա մի ձևաչափ է՝ մայիսյան հաղթանակների տոնն ամփոփելու, գեղեցկացնելու. այդ օրը հանդիսատեսի առաջ ելույթ են ունենում մեր փողային, ժողգործիքների և ջազ-բենդ հսկայական նվագախմբերը, և փոքրիկ համույթները լրացնում են տոնական տրամադրությունները»:

Կատարողական մակարդակի մասին խոսելիս Արա Գևորգյանն ընդգծեց. «Մեր ժողգործիքների անսամբլը, փողային նվագախումբը հանրապետության լավագույններից են են, ջազ բենդն էլ լավն է, ետ չի մնում մյուսներից և ամեն տարի նորովի է ներկայանում»:

Ուսանողական սերունդները փոխվում են, դասախոսներն էլ մեկ տարվա աշխատանքի արդյունքն են ներկայացնում ուսանողների միջոցով: Լսարաններում տեղի ունեցող հաշվետու լսումներից հետո համալսարանական դահլիճում կատարվում է գլխավոր փորձը, ուր ուսանողներն արդեն ներկայանում են համերգային հագուստներով:

Ս. ԱՍՐՅԱՆ

Կներդրվի նոր դասընթաց

Մանկավարժական համալսարանում բացված Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայում կազմակերպվել էր լեզվաբանական տերմինների ուսումնասիրման հարցերին նվիրված կլոր սեղան, որին մասնակցում էին Հայաստանի և Արցախի հումանիտար բուհերի հայոց լեզվի, հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնների վարիչները:

Ներկաները հանգամանորեն խոսեցին լեզվաբանական տերմինների ուսումնասիրության արդի վիճակի ու հեռանկարների, բուհական համակարգում լեզվաբանական տերմինների ուսումնասիրման դրվածքի մասին, նաև քննարկեցին լաբորատորիայի ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանի կազմած «Լեզվաբանական տերմինների համակարգը» մագիստրատրոսական կրթական ծրագրի նախագիծը:

Մանկավարժական համալսարանի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Սրբուհի Գևորգյանը ողջունեց լաբորատորիայի նախաձեռնությունը, հույս հայտնեց, որ այն հնարավորություն կտա մասնագետներին՝ ներկայացնել մոտեցումներ ու հիմնավորումներ՝ նկատելով, որ ներկաների առաջարկները լեզվաբանության ոլորտի զարգացումները քայլ առաջ կտանեն:

Մանկավարժական համալսարանի Հոգաբարձուների խորհրդի նախագահ, դոցենտ Դավիթ Գյուրջինյանը կարևորեց համալսարանի կառուցվածքում լաբորատորիայի ստեղծումը, կառույց, որն, անշուշտ, իր դերն ու նշանակությունը կունենա բարձրագույն կրթության ոլորտում:

Կարևորելով մագիստրատուրայի կրթական ծրագրի նոր նախագիծը և հույս հայտնելով, որ քննարկումները հնարավորություն կտան նոր դասընթացը մատուցել նոր մոտեցումներով, Դ.Գյուրջինյանն ասաց. «Կուզենայի, որ ապագա ուսուցիչները, թարգմանիչները, տիպաբանները ծանոթ լինեին համաշխարհային լեզվաբանական մտքին. դրա անհրաժեշտությունը կա, քանի որ դարաշրջանը սրընթաց է»:

Դավիթ Գյուրջինյանի կարծիքով միայն համալսարանական նյութի յուրացմամբ բուհի շրջանավարտը չի կարող արդյունավետ դասավանդել, միաժամանակ պետք է փոխվի նաև լեզվաբանների ընկալումը, և մասնագետ-լեզվաբանը, դասախոսը պետք է լինի նախ՝ լավ հետազոտող, ապա՝ գիտնական, այնուհետև՝ ուսուցանող:

«Թե՛ դպրոցական, թե՛ բուհական համակարգում նոր ծրագիր, դասընթաց ներառելը պետք է միտված լինի միայն մեկ նպատակի՝ ունենալ զարգացած և կրթված սերունդ»,-ասաց լաբորատորիայի ղեկավար, Արարատ Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանը: Ընդգծելով լեզվաբանական տերմինների դասընթաց ստեղծելու անհրաժեշտությունը՝ պրոֆեսորը հույս հայտնեց, որ գործընկերների նոր առաջարկների հիման վրա կմշակվի ծրագրի վերջնական ու ամբողջական տարբերակ:

Հումանիտար բուհերի հրավիրյալներ հայոց լեզվի, հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնների վարիչներն իրենց ելույթներում կարևորեցին լաբորատորիայի հիմնումը և մատնանշեցին հայագիտության և լեզվաբանության միավորման առավել արդյունավետ կողմերը:

Ներկայացնելով նախագծի վերաբերյալ իրենց դիտարկումները՝ մասնագետները խոստացան, որ յուրաքանչյուրն իր ոլորտում իր նպաստը կբերի լեզվաբանական տերմինների ուսումնասիրման գործին:

Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիայի կազմակերպած կլոր սեղանի արդյունքներն ամփոփեց համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Նա իր խոսքում մասնավորաբար նշեց. «Ես համոզված եմ, որ նորաստեղծ լաբորատորիան կտա ցանկալի արդյունք: Մենք նախաձեռնել ենք այս ենթակառուցվածքի գործունեությունը համալսարանում՝ հույս ունենալով, որ այն կնպաստի ոչ միայն լեզվաբանական գիտության զարգացմանը, այլև կարող է օգնել համալսարանում դասավանդվող հայագիտական առարկաների որակի բարելավմանը: Լաբորատորիայի ղեկավար պրոֆեսոր Լ. Խաչատրյանը ճանաչված լեզվաբան է մեզանում, նրա աշխատանքները տպագրվում են միջազգային գիտական պարբերականներում, ուստի նա կարող է իր զգալի նպաստը բերել լաբորատորիայի աշխատանքներին: Դրա վկայությունն է այս միջոցառումը, որ քննարկում է Լ.Խաչատրյանի կազմած դասընթացի ծրագիրը՝ այն մագիստրոսական կրթական համակարգ ներառելու համար: Շնորհակալություն ձեր մասնակցության համար և բարի երթ լաբորատորիայի աշխատանքներին»:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՍՏՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԷՐ

Օրերս Մանկավարժական համալսարանում հյուրընկալվել էին Միջազգային աստղագիտական միության «Աստղագիտության դասավանդումը դպրոցում» միջազգային ծրագրի հանձնաժողովի ղեկավար Ռոզա Մարիա Ռոսը, հանձնաժողովի անդամ Ալան Փիքվիքը և ծրագրի հայաստանյան խմբի անդամները: Եռօրյա այցի ընթացքում նրանք հանդիպումներ ունեցան Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ, հանդես եկան դասախոսություններով:

«Աստղագիտության դասավանդումը դպրոցում» ծրագրի հանձնաժողովի ղեկավար Ռոզա Մարիա Ռոսն ընդգծեց, որ իրենք հետաքրքրված են աստղագիտությունն իր բոլոր մակարդակներում զարգացնելով և դասընթացներն իրականացնում են ամբողջ աշխարհում:

Հանձնաժողովի անդամ Ալան Փիքվիքն էլ նկատեց՝ Մանկավարժական համալսարանում անցկացվող այս ծրագիրը նպատակ ունի աստղագիտության ուսուցիչներին վերապատրաստել այնպես, որ նրանք կարողանան մեծացնել աշակերտների սերն ու հետաքրքրքությունը դեպի գիտությունը:

Ալան Փիքվիքը հույս հայտնեց, որ աստղագիտության հետաքրքիր հարցերի ու ոլորտների մասին խոսելիս ապագա մանկավարժները կլինեն համարձակ ու վստահ. «Մեր հիմնական նպատակն է երեխաների մեջ սեր ու հետաքրքրություն արթացնել դեպի գիտությունն ու աստղագիտությունը»,-հավելեց նա:

«Աստղագիտության դասավանդումը դպրոցում» ծրագրի շրջանակներում ուսանողները եղան նաև Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանում, մասնակցեցին աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանի վարպետության դասին, ծանոթացան Վիկտոր Համբարձումյանի կյանքին ու գործունեությանը:

«Իրականում շատ կարևոր է աստղագիտությունը, և գիտություններն ընդհանրապես, ներկայացնել դպրոցական ծրագրերում: Մենք այստեղ ենք, որպեսզի զարգացնենք աստղագիտությունը դպրոցներում՝ հատկապես միջնակարգ դպրոցում»,-նշեց Ռոզա Մարիա Ռոսն ու հավելեց, որ ծրագիրը կարևոր է հատկապես ուսուցիչների համար. այն պետք է տա բավարար տեղեկություններ ոլորտի ու գիտության մասին: Վերջինիս կարծիքով՝ աստղագիտություն դասավանդող ուսուցիչները պետք է լինեն պրոֆեսիոնալ և անընդհատ սովորեն այն, ինչը այդքան էլ լավ չգիտեն:

Հանձնաժողովի ղեկավարը հավելեց նաև, որ Աստղադիտարանի աշխատողներով համալրված տեղական խումբը Հայաստանում ծրագրի ավարտից հետո կարող է միանալ իրենց և աջակցել տարբեր երկրների մասնագետների համագործակցությանը, փորձի փոխանակմանը:

Վարպետության դասից հետո ուսանողները աստղադիտակով դիտեցին աստղերը և մասնագետներից լսեցին աստղադիտակների մասին հետաքրքիր փաստեր:

Ք. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Մենք Աստծո հետ հաղորդակցվելու միջոց ունենք. դա մեր հոգևոր գանձերն են...

Մանկավարժական համալսարանում Հուշարձանների միջազգային օրը՝ ապրիլի 18-ը նշանավորվեց տարբեր ցուցադրություններով: Ընդհանրապես ամբողջ ամիսը տոնական է՝ տարբեր ցուցադրությունների առումով: Եվ ահա Հուշարձանների միջազգային օրվա առիթով ևս մեկ ցուցադրություն կազմակերպվեց. համալսարանի դասախոսները, ուսանողներն ու աշխատողները հնարավորություն ունեցան ծանոթանալու գեղանկարիչ Լեմս Ներսիսյանի 15 աշխատանքներին, որտեղ պատկերված էին հայ միջնադարյան հուշարձանները, որոնք մեր հոգևոր, մշակութային ժառանգության մասն են կազմում:



«Մենք շատ հարուստ ենք: Մենք միակ ժողովուրդն ենք, որ իրավունք ունենք ասելու՝ մենք Աստծո հետ հաղորդակցվելու միջոց ունենք. դա մեր հոգևոր գանձերն են»,-ասաց ցուցահանդեսի հեղինակը՝ դոկտոր, պրոֆեսոր Լեմս Ներսիսյանը:

Անցյալ տարի Նկարիչների միության սրահում բացված ցուցահանդեսում ցուցադրվեց մկարչի 132 աշխատանք, որտեղ պատկերված էին մեր պատմական հուշարձաններն ու վանքերը, վանական համալիրները: Պրոֆեսորը խորհուրդ տվեց բոլորին՝ գնալ Արևմտյան Հայաստան, Արցախ, տեսնել Դադիվանքը, Շուշին, Գանձասարը…

«Այս ցուցադրությունը նվիրված է Հուշարձանների միջազգային օրվան, և շատ լավ է, որ սա այն մշակութային ժառանգությունն է, որը ոչ միայն հիշում ես, ոչ միայն տեսնում ես, այլև քո միջոցով վերարտադրում ես: Յուրաքանչյուր հուշարձանը նկարելիս նկարիչը նրա մեջ իր հոգին ու եսն է դնում. այդ առումով գեղանկարիչ Լեմս Ներսիսյանի աշխատանքներն այնքան ջերմություն ու նվիրում ունեն իրենց մեջ, որ կարծես առաջին անգամ հուշարձանը տեսնում ես այդ տեսանկյունից»,-ասաց պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը:

Հիրավի, «հոգևոր հուշարձանները ժողովրդի ինքնահաստատման երգերն են՝ քարացած ժամանակի հողմապտույտում», և «Հայաստանիս հոգևոր կանթեղները» խորագրով ցուցահանդեսի այցելուների համար իսկապես հայտնություն էր մեր հոգևոր գանձերի՝ Ներսիսյանական ընկալումն ու մատուցումը:

Ապրելու և աշխատելու կենսակերպը

ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետում մեկ շաբաթով բացվել էր «Այս անգամ էլ մենք» խորագրով ցուցադրությունը, որն իր ձևաչափով աննախադեպ էր: Նորությունն այն էր, որ ֆակուլտետում պարբերաբար կազմակերպվող ցուցադրություններին երբևէ չէին մասնակցել ֆակուլտետի ուսումնաօժանդակ և վարչական կազմի ներկայացուցիչները, և այս անգամ էլ նրանք էին որոշել հանդես գալ իրենց ստեղծագործություններով. դրանք բնանկարներ էին, դիմանկարներ, նատյուրմորտներ, գեղանկարչական դրսևորումներով արտահայտված ու մարդկային տարբեր զգացողություններ արտահայտող կոմպոզիցիոն աշխատանքներ:

Ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը շնորհավորեց 7 մասնակիցներին ցուցադրության բացման առթիվ, վստահեցրեց, որ ներկայացված ստեղծագործությունները կատարված են բարձր վարպետությամբ և նրանց հորդորեց աշխատելուն զուգահեռ շարունակեն ստեղծագործել: Իր ելույթում նա ասաց. «Գեղարվեստական կրթության ֆակուլտետի առօրյան ներշնչում է ստեղծագործել, իսկ ցուցադրության մասնակիցներն ավելի շատ ժամանակ անցկացնում են աշխատավայրում: Բացի այդ, նրանց հիմնական մասն ունի մասնագիտական կրթություն, և այս ցուցադրությունն էլ առիթ կլինի, որ նրանց մեջ արթնանա ի վերուստ տրված շնորհի, տաղանդի հանդեպ հետաքրքրությունն ու հավատարմությունը մասնագիտությանը»:

Ցուցադրության մասնակիցներին շնորհավորեցին Կերպարվեստի ամբիոնի վարիչ Կարեն Աղամյանը և դասախոս Տարոն Ալեքսանյանը, ում ջանքերով էլ ցուցահանդեսը կայացավ:

Ստեղծագործական ցուցադրությունները ֆակուլտետում պարբերական բնույթ են կրում. դասախոսների, ուսանողների, այլ ցուցադրությունների շարքում «Այս անգամ էլ մենք» խորագրով ցուցադրությունն առանձնացավ իր նախադեպը չունեցող ձևաչափով: Մաղթենք հաջողություններ ֆակուլտետի աշխատակիցներին և հուսանք, որ ստեղծագործական աշխատանքը նրանց համար այսուհետ կդառնա ապրելու և աշխատելու յուրօրինակ կենսակերպ ու աշխարհը սեփական հոգու պրիզմայով նորովի մատուցելու հնարավորություն:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

Կատարողական արվեստի համաշխարհային ասոցիացիան (WAPA) ներկայացրել է անցյալ տարվա մշակութայինինքնատիպ գործունեության ամփոփումը. Ե. Չարենցի գրականության և արվեստի թանգարանում տեղի է ունեցել հայրենական մշակույթի գործիչների պարգևատրման արարողությունը, ովքեր Հայաստանում և նրա սահմաններից դուրս իրենց նպաստն են բերել կատարողական արվեստի զարգացման գործին:

Պարգևատրվել են մի շարք օպերայի և բալետի արտիստներ, սպորտային և ժողովրդական պարերի կատարողներ, երաժիշտներ և վոկալիստներ, արվեստի այլ ճյուղերի ներկայացուցիչներ, ինչպես նաև Երևանի և երկրի այլ քաղաքների արվեստի դպրոցների և բուհերի դասավանդողներ:

Պարգևատրումները նվիրված են եղել Պարարվեստի միջազգային օրվան և դրանից երկու օր հետո նշվող Կատարողական արվեստի միջազգային օրվան: Արվեստի ճյուղերի մեջ այս անգամ ասոցիացիայի հիմնադիր-ղեկավար Արման Ղուկասյանի կողմից ավելացվել են նաև գրականությունն ու թարգմանչական գործը:

Միջոցառումը բացել է Ե. Չարենցի գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանը: Նա մասնավորապես նշել է. «Յուրաքանչյուր մարդ, հատկապես արվեստի գործիչը, պարբերաբար իր աշխատանքի համար գնահատվելու կարիք ունի, որովհետև հայրենիքից դուրս մասնակցելով տարբեր միջոցառումների, մրցույթների և փառատոնների, նա դառնում է նրա դեսպանը»:

2014 թվականին հիմնադրված Կատարողական արվեստի համաշխարհային ասոցիացիան արդեն 5 տարի ակտիվ գործունեություն է ծավալում Հայաստանում:

Ուրախությամբ պետք է նշենք, որ այս անգամ երաժշտական արվեստի զարգացման գործում ունեցած ներդրման համար «Մշակույթի վաստակավոր գործիչ» կոչմանն է արժանացել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի երաժշտության ամբիոնի և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային թատրոնի կլարնետահար, երաժիշտ, Հանրային ռադիոյի էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի կատարող Սևադա Շհոյանը:

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Սպանողը կարոտն է, ոչ թե ոտքերի ցավը

Արդեն ժամը յոթն է: Բացեցիր դուռը, դուրս ես գալիս՝ հետևիդ քարշ տալով անցյալից մնացած կոտրված ճամպրուկդ, որ ձերոնք գնել էին Մոսկվայից հին-հին ժամանակներում: Մի հայացք ես գցում ու տեսնում աչքերը, որոնք սպասումով են լցված: Դու և նրանք քեզ եք սպասում: Ապրում ես յոթերորդ հարկում, վերելակը աշխատում է, մինչդեռ դու ընտրում ես առավել սպանողը՝ ոտքով իջնել: Իջնում ես՝ հետևիդ քարշ տալով առանց այդ էլ չունեցածդ ճամպրուկը: Հատ առ հատ հավաքում ես ու գիրկդ լցնում բոլոր հարկերի կարոտները: Սպանողը կարոտն է, ոչ թե ոտքերի ցավը: Ու ամեն անգամ նույն ճանապարհն անցնելիս թվում է, թե վերջինն է՝ էլ չես տեսնելու շենքի պատերի դատարկ գրությունները, որ հիմա հատ-հատ կարդում ես: Լացը խեղդում է. արդեն կարոտում ես: Իջար: Աղմուկով փակեցիր տաքսի մեքենայի դուռը, ու հայացքդ նստեց ձեր հին, բարակ, սառը պատուհանին, որն արդեն բամբակապատ էր: Ձմեռը եկել էր, իսկ տունը նյութական ջերմություն էր ուզում: Տաքսին շարժվեց, իսկ հայացքը դեռ նստած է…

Թափանցիկության տեսություն

Աշխարհում ամեն ինչ թափանցիկ է, բացի խանութում մեզ տրվող տոպրակներից: Դրանք պարզապես տեսանելի են՝ ուրիշ ոչ մի խորհրդավոր բան: Գժվելու բան է, չէ՞. դու երևում ես, ու կյանքում միայն դա է կարևորը: Երբ փոքր էի, մտածում էի, որ կարոտը մարդուն շատ չտեսնելուց է ծնվում... Հիմա՝ հակառակը: Ամեն անգամ մետրո նստելիս նայում եմ մարդկանց և ուշադիր հետևում, թե ինչ են անում այն ժամանակ, երբ այն սկսում է շարժվել: Նրանք իրար են նայում՝ իմաստ չարտահայտող, սառնարանից նոր հանած ուտելիքի հայացքով: Հետո արդեն իրենց հայացքն ուղղում են վագոնի փոքրիկ պատուհանից երևացող ամայի դաշտերին ու փողոցներին: Ու ես հասկանում եմ, որ ո՛չ մարդկանց դեմքերին եմ նայում, ո՛չ էլ դաշտերին. ես ուշադիր հետևում եմ նրանց կոշիկներին: Թե ինչի՞ս են պետք դրանք՝ ես էլ չգիտեմ: Ամեն անգամ «Բաղրամյան» կայարանից «Գարեգին Նժդեհ» գնալու ժամանակ, վագոնից դուրս գալուց հետո մտածում եմ, թե ինչ-որ բան, այնուամենայնիվ, թողել եմ մետրոյում և ստուգելով ու տեսնելով, որ բոլոր իրերս տեղում են՝ ես հասկացել եմ, որ վագոնի դեղին նստարանների վրա ես մոռացել եմ իմ հայացքը...

Հիմա ինքս ինձ խորհում եմ, թե ովքե՞ր են թափանցիկները: Նրանք մառախուղից նոր դուրս եկածներն են՝ պարզ ու բարդ, տեսանելի ու միևնույն ժամանակ մշուշոտ: Հետո մտածում եմ՝ ի՞նչ է թափանցիկ կարոտը: Այն, երբ կարոտում ես ինքդ քեզ: Ես կարոտում եմ այն աղջկան, ով երեկ սպասում էր վաղվան, վաղը եկել է, իսկ նա չկա…: Մետրոն այսօր իր հետ չտարավ կոշիկի՝ իմ սովորական հայացքը, ինքն արագությամբ իր հետ վերցրեց ու շաղ տվեց մի թափանցիկ կարոտ: Ես փորձում եմ հավաքել այն ու գիրկս լցնել…

Անձրևից հետո

Անձրևից հետո գոյացած ջրափոսում տերևի հիշողությունն է թափվում՝ կաթկաթ: Ես կանգնած եմ: Լացը չզգալու համար գլխարկս ծածկում է կարեկցանքս: Անձրևն էլ չկա, բայց ջրափոսը փաստում է նրա լինելը՝ առանձնապես խոնավությունը սեփական մաշկի վրա զգացողների կյանքում: Անձրևից հետո գոյացած ջրափոսը հիշողություններով է լցվում՝ կաթկաթ: Ես նայում եմ ու ջրափոսը աչքերս է արտացոլում՝ կարծես չզգալով ներքին տագնապս: Հայացքս լողում է ու խառնվում տերևի հիշողությանը: Լացը չզգալու համար գլխարկս չի կարողանում էլ ծածկել կարեկցանքս: Նորն է պետք փնտրել…

Ձեռքդ տո՛ւր

Ձեռքդ տո՛ւր: Չմտածես թե վախենում եմ, չէ՛, ես չեմ վախենում դեպի արևը քայլելուց: Ձեռքդ տո՛ւր: Չէ՛, ես չեմ ափսոսում քո ձեռքը խնդրելու համար, ես չեմ վախենում, ուզում եմ քեզ ցույց տալ իմ լույսը: Սիրում եմ: Ո՛չ քեզ, ո՛չ էլ մեկ ուրիշին, ես սիրում եմ արևի լույսը, որից պաշտպանվում ես քո սև ու ամեն ինչ սևացնող ակնոցով: Ձեռքդ տո՛ւր: Արի քայլենք: Չմտածես թե առանց քո մատների չեմ գնա, չէ՛, ես գիտեմ շարժվող քարերի վրա միայնակ քայլելու բանաձևը: Արի՛, արի քայլենք միասին, ու ես քեզ կսովորեցնեմ խառնիճաղանջ մտքերից սիմֆոնիա ստեղծելու արվեստը: Մի՛ վախեցիր, ես քեզ ստվերում չեմ թողնի, դու չես վախենա բարձրահասակ ծառի տերևների արտացոլանքից, ես քեզ չեմ թողնի նույնիսկ քո՝ ասֆալտին արևի ու քո ստեղծած պատկերից վախենաս: Արի՛, ես քեզ կտամ մի բուռ թախիծ ու ջերմություն, մի բուռ անհանգստություն ու վախ, մի բուռ սեր ու հինգ բուռ արև… Մեկնի՛ր ինձ մատներդ: Դրանք հետ են գնում, ծալվում, բռունցք են դառնում… Ես միայնակ եմ քայլում շարժվող քարերի վրայով: Ձեռքդ մի՛ տուր, ես արդեն իմ մյուս ձեռքն եմ բռնել:

Տաթևիկ ԱՐՇԱԿՅԱՆ
Պատմության և իրավագիտության ֆակուլտետ

Բաց դաս

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողները դասընթացը վարող մանկլավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Իզաբելլա Բաբայանի ղեկավարությամբ, «Բարձրագույն և մասնագիտական դպրոցի մանկավարժություն» առարկայի շրջանակներում անցկացրին բաց դաս՝ «Դասավանդողի մանկավարժության կոմպետենտություն» թեմայով: Մագիստրոսները դասի թեման ներկայացնելու նպատակով հմտորեն օգտվեցին ինտերակտիվ մեթոդներից և հետաքրքիր ձևով բացահայտեցին մանկավարժական կոմպետենտության նշանակությունը, տեսակներն ու կիրառությունը մանկավարժական գործունեության ընթացքում:

Դասի թեման արդիական էր և հետաքրքիր, այն ուղեկցվեց շնորհանդեսով, հիմնական հարցերի շուրջ դասավանդողների և ուսանողների միջև ակտիվ քննարկումներով:

Դասին ներկա էին Կրթության և հոգեբանության և սոցիոլոգիայի մանկավարժության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողները և Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դասախոս Նաիրա Մարտիրոսյանը:

Թեմային առնչվող տեսական հիմնադրույթներն էլ ուսանելի խորհուրդներով ամփոփեց դասախոսը Իզաբելլա Բաբայանը:

ԱՆԻ ՕՀԱՆՅԱՆ

Ուսանողական կյանքի վերջին էջը

Ասում են կյանքում պատահական ոչիչ չի լինում: Պատահաբար ոչինչ չի սկսվում և պատահաբար էլ իր ավարտին չի մոտենում…

Մեր կուրսի պատմությունն սկսվեց ուղիղ չորս տարի առաջ: Չորս տարի առաջ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հարկի ներքո հավաքվեցին տարբեր երիտասարդներ՝ իրենց երազներով ու նպատակներով, բնավորություններով ու կյանքի վերաբերյալ ունեցած իրենց պատկերացումներով: Նրանց բոլորին միավորում էր մեկ բան՝ կյանքի առեղծվածի բացահայտումը. չէ՞ որ նրանք ապագա կենսաբաններ էին:

Փոխադարձ սիրո, հարգանքի ու նվիրվածության վրա հիմնված հաջող «էվոլյուցիոն զարգացման» արդյունքում ձևավորվեց մեր համերաշխ ընտանիքը: Չորս տարվա ընթացքում մեզնից յուրաքանչյուրը մեր դասախոսների տված առարկայական գիտելիքների, կյանքի դասերի և «մեկս մյուսից սովորելու» սկզբունքի շնորհիվ փոխվեց որակապես՝ իր մեջ խտացնելով իսկական մանկավարժին ու մարդ քաղաքացուն բնորոշ գծերը:

Այսօր մենք թերթում ենք մեր ուսանողական կյանքի վերջին էջը՝ ավարտելով «էվոլյուցիոն տեսություն» առարկայով: Հետաքրքիր է, չէ՞. կարծես կանխավ ծրագրված լիներ մեր ընտանիքի ձևավորման «էվոլյուցիոն գործընթացի» սկիզբն ու ավարտը: Իսկ ի՞նչ է լինելու հետո, չէ՞ որ էվոլյուցիան երբեք կանգ չի առնում…

Թերևս կյանքը մեզ կտանի տարբեր ուղղություններով, բայց ամենքս էլ կբախվենք էվոլյուցիոն գործընթացի շարժիչ ուժերից մեկին, որին կարող ենք անվանել «գոյության կռիվ հասարակության մեջ», և այն որակները, որոնք ձևավորվել են մեր մեջ այս տարիների ընթացքում, կօգնեն մեզ հաղթահարել կյանքի դժվարությունները և հաջողություններ գրանցել մեր կյանքի ճանապարհին:

Կենսաբանների չորրորդ կուրսի՝ մեր պատմությունն ավարտվեց «էվոլյուցիոն տեսության» վերջին դասով՝ ընկեր Թանգամյանի «4-րդ կենսաբաններ ընտանիքի էվոլյուցիոն տեսություն» դասախոսությամբ և մենք իրար խոստացանք որ մեր ընտանիքն էլ «էվոլյուցիոն փոփոխության չի ենթարկվելու»:

Նվարդ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ
Կենսաբանության 4-րդ կուրսի ուսանողներ

Հանդիպում քաղաքագետի հետ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետի Քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի վարիչ, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Լևոն Շիրինյանի հետ հանդիպման էին եկել Զվարթնոցի Մովսես Խորենացու անվան № 10 ավագ դպրոցի ուսուցիչները և պատմահասարակագիտական ուղղվածությամբ սովորող աշակերտները: Մեծ էր դպրոցականների՝ Մանկավարժական համալսարանի ներքին կառուցվածքին, կանոնակարգին և ուսումնական գործընթացի առաձնահատկություններին մոտիկից ծանոթանալու հետաքրքրությունն ու ցանկությունը:

Աշակերտների համար պատեհ առիթ էր «Հասարակագիտություն» մասնագիտության շրջանակներում ուսումնասիրվող առարկաներին ևս ծանոթանալը: Աշակերտները համակ ուշադրությամբ լսեցին ամբիոնի վարիչի բացատրությունները «Հասարակագիտություն» մասնագիտության շրջանակներում դասավանդվող առարկաների և մանկավարժի աշխարհայացքի վրա վերոհիշյալ կրթության ազդեցության մեկնաբանությունը:

Հավելենք, որ «Հասարակագիտություն» մասնագիտությամբ շրջանավարտներ է պատրաստում միայն ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետը:

Ավագ դպրոցի աշակերտները կրթական հիմնախնդիրներին զուգահեռ հետաքրքրվեցին նաև հանրապետության ներքաղաքական իրավիճակով, երկրի անվտանգությանը վերաբերող և այլ հարցերով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների համար

Դասընթացները կկազմակերպվեն Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Վերապատրաստման դասընթացներին կարող է մասնակցել այն անձը, ով ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Վերապատրաստմանը մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

1) դիմում՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի անունով (ձև 1, լրացվում է տեղում).

2) 3x4 չափի 1 լուսանկար.

3) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը.

4) աշխատանքային գրքույկի պատճենը կամ քաղվածքը.

5) անձնագրի պատճենը.

6) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը) 2 օրինակ.

7) Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Ամերիա բանկ» ՓԲԸ-ում 1570027790960100 հաշվեհամարին փոխանցված գումարի անդորրագիրը:

Փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակի հետ միասին: Պատճենների իսկությունը որոշելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Դասընթացի տևողությունը 15 օր է:

Վերապատրաստման դասընթացի արժեքը 69.000 ՀՀ դրամ է՝ առանց ճաշի և սուրճի ընդմիջման:

Դասընթացները կվարեն տնօրենների վերապատրաստման մեծ փորձ ունեցող մասնագետները:

Դիմումներն ընդունվում են ս.թ. մայիսի 6-ից-21-ը:

Դասընթացները սկսվելու են մայիսի 27-ից հունիսի 17-ը: Յուրաքանչյուր օր դասընթացները սկսվելու են ժամը 09^{30}-ից:

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Տիգրան Մեծի 17, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 3-րդ հարկ, 318 սենյակ, ամեն օր՝ ժամը 9^{00}-ից 16^{00}-ը: Հարցեր ունենալու դեպքում զանգահարել՝ 010-59-70-79 կամ գրել հետևյալ էլեկտրոնային փոստին՝ researchcenter@aspu.am:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2019-2020 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելություն (առկա ուսուցում)

Մանկավարժության տեսություն և պատմություն - ԺԳ.00.01, 1 տեղ

Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (օտար լեզու) - ԺԳ.00.02, 1 տեղ

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

Ասպիրանտուրա ընդունվելու համար տրվում է դիմում հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).

2) օտար լեզու և ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ).

3) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում.

4) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի).

5) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Ստորև նշված օտար լեզուներից որևէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝

1) անգլերենից՝ «TOEFL» (iBT) (ԱյԲիԹի)՝ 46 և «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը.

2) ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիէՖ)՝ 200 միավորը.

3) գերմաներենից՝ «on DaF» (օն ԴաՖ)՝ 60 միավորը:

Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում 25 միավորը:

Մասնագիտական քննության հարցաշարը, որն ընդգրկում է նախորդ աստիճանների ծրագրային նյութը, կազմվում է հաստատության մասնագիտական ամբիոնների (դեպարտամենտների), գիտական ստորաբաժանման կամ հանձնաժողովի կողմից և հաստատվում է հաստատության ղեկավարի կողմից:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև հունիսի 7-ը (ներառյալ):

Ընդունելության մասնագիտական քննությունները կազմակերպվում են 2019թ. հունիսի 10-ից 14-ը (ներառյալ):

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 3-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն, հեռ. 59-70-29:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 16.04. 2019 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ